միթէ բաւական չէ՞ քու փառացդ մեծանձն ժողովուրդ մը լուծից տակը խոնարհեցընելը, ու կը բանադատես ալ որ յաղթուածները գան խոնարհին այն ձեռքին տակը, որ զանոնք նուաճեր է:

Երբոր ես նաւէն ելլելու վրայ էի, Նաւակրատես աջը ինծի երկնցուց, զոր ես յարգանօք համբուրեցի: Դարձաւ ինծի «Որդեակ, ըսաւ, ամենեւին մի՛ տրտմիր, ու յոյս ունեցիր բարեյաջողութեան հանդիպելու: Դուն այս համառօտ անցքիդ մէջ՝ չյուսացած մխիթարութեդ հանդիպեցար. նոյնպէս Հռոմ ալ մտքեդ չանցած մխիթարութիւններ պիտի գտնես: Պատանեայ մը յանձնառութիւնը իր անձէն կը կախուի. սիրելի ըլլալ ուզողը բաւական է որ արժանաւորութիւն ցուցընէ: Բարո՛վ երթաս: Ամենեւին մտքեդ չհանես, որ ինչպէս որ ամէն հով ձախող չըլլար, այսպէս ալ կրնայ ըլլալ որ երբեմն նաւ մէկ մրրիկ մը զմեզ նաւահանգիստ հասցընէ»:

Ահա քեզի, հայր իմ սիրելի, իմին ինչուան Ռաւէնա բրած ճամբորդութեանս մանրապատում պատմութիւնը. իմին քեզմէ բաժնուելէս ետքը այսպիսի գերութեան վիճակիս մէջ ամէն մէկ բանը տեսնելուս և լսելուս առեն մէկ հատիկ մխիթարութիւնս այս է, մտածելս թէ այս տեսածս այս լսածս պիտի գրեմ իմ հօրս. և այս քիչ օրուան մէջ փորձեցի որ այս կերպ մտածելովս խիստ ուշադիր կ'ըլլամ ամէն տեսածիս և լսածիս, և որբութեանս մէկ մասն ալ քու յիշատակովդ կը փարատեմ:

---

## ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ

### Անանիայի Շիրակունւոյ յաղագս կատարման համարողութեան և կերպից հարցման :

Հարցումն Դ. — Հաւք ուխտին Սոփեայ՝ զհինգերորդ մասն առնուն սարկաւագունքն, և տասներորդ մասն առնուն քահանայք, և երկերիւր քառասուն լիտր առնուն եպիսկոպոսունք. և երկու հազար լիտր այլ ուխտն: — Արդ գիտեա թէ ընդ ամենայն քանի՞ լիտր լինի հաւքն:

Լուծումն. — Լիցին 240 և 2000 լտերքն = ա, և հաւքն = փ. յորմէ հինգերորդ մասն նորին լինի $\frac{\text{փ}}{5}$, և տասներորդ մասն նորին $\frac{\text{փ}}{10}$, որք միանգամայն ընդ 2240 = ա լտերսն պարտին հաւասար գոլ բովանդակ հաւոցն.

Վասն որոյ $$\frac{\text{փ}}{5}+\frac{\text{փ}}{10}+\text{ա}=\text{փ}.$$

և ջնջեալ զկոտորակսն մի առ մի բազմապատկելով զամենայն մասունս հաւասարմանն 'ի ձեռն հասարակաց յարանուանողին 10, գտանեմք

$$2\text{փ}+\text{փ}+10\text{ա}=10\text{փ},$$

զոր վերածեալ և փոխադրեալ՝ գտանեմք

$$10\text{ա}=7\text{փ},$$

և բաժանեալ յ7

$$\frac{10}{7}\text{ա}=\text{փ}:$$

Արդ որովհետև ըստ ենթադրութեանս է ա = 2240, ապա $3200=2240\times\frac{10}{7}=320\times10=\frac{10}{7}\text{ա}$, և $\text{փ}=\frac{10}{7}\text{ա}=320\times10=3200$. և այս արտադրեալ ցուցանէ թէ լինի հաւք ուխտին երեք հազար և երկու հարիւր լիտր. որ և է համեմատ ամենայն հանգամանաց առաջի եդեալ հարցմանս:

Ստուգութիւն. — Ըստ հանգամանաց հարցմանս է

$$\frac{\text{փ}}{5}+\frac{\text{փ}}{10}+\text{ա}=\text{փ}.$$

արդ փոխանակելով զփ ընդ 3200ոյ, որ է հաւք ուխտին՝ գտանեմք լեալ հինգերորդ մասն նորին

$$\frac{\text{փ}}{5}=\frac{3200}{5}=640$$

տասներորդ մասին նորին

$$\frac{\text{փ}}{10}=\frac{3200}{10}=320$$

| | |
|---|---|
| որք միանգամայն ընդ լտերս | 2240 |
| առնեն լիտր | 3200 |

Հ. Հ. Պ

---

### Անցեալ ամսուն դրուած կեղծագրութիւնն է

Անի—ծա—բերան—օր—ինի—սիրտ 'ի չա—րի—սանդ—ա—դար ձգի 'ի գիւաց.
իս կայ—ր—ամբ 'ի ծիբար—ութ—իւն—սուր—ա—խան—այ 'ի մի—տ—սան—ձի—ն:

Անիծաբեր անօրինի սիրտ 'ի չարիս անդադար ձգի 'ի գիւաց. Իսկ այր ամբիծ 'ի բարութիւնս ուրախանայ 'ի միտս անձին:

ՎԵՆԵՏԻԿ Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑՆ ՂԱԶԱՐՈՒ